«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	«Գեղարվեստական տեքստի շուրջ տարվող աշխատանքը որպես սովորողի հայրենասիրական դաստիարակության միջոց»
ԱՌԱՐԿԱ	Հայոց լեզու և գրականություն
ՀԵՂԻՆԱԿ	Էլմիրա Ղևոնդյան
ՄԱՐԶ	Կոտայք
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Արտավազի միջնակարգ դպրոց

Բովանդակություն

Ներածություն……2

Հայրենասիրական դաստիարակությունը դպրոցում……6

Գեղարվեստական տեքստի շուրջ տարվող աշխատանքը որպես հայրենասիրության սերմանման միջոց……9

Եզրակացություն……15

Գրականություն……18

Ներածություն

<u>Նպատակը</u> ՝

- Ամրապնդել ստեղծագործությունների մեջ պատկերված հայրենիքի, կարոտի, մարդկային ապրումների ու գործողությունների մասին պատկերացումը։
- Նպաստել ՝

✓ ստացած գիտելիքները հիշողություններով, սեփական խոսքով մեկնաբանելուն

✓ հայրենասիրության, ազգային գաղափարների գիտակցմանը

- Հասնել նրան, որ բանավոր շարադրի սեփական մտքերը, զգացումները, կարծիքը։Կարողանա նաև գրավոր շարադրի սեփական մտքերը, գրագետ խոսքը դարձնի ինքնարտահայտման և ինքնադրսևոր-ման միջոց։
- Ձևավորել արժեքային համակարգ, այնպիսի անհատ, որ վառվի հայրենասիրական գաղափար-ներով, հայրենիքը և մայրը դառնան համարժեք, պատրաստ լինեն պաշտպանելու ամենանվիրականը, ամենաթանկը՝ երկիր հայրենին։

<u>Խնդիրները</u> ՝

- Սովորեցնել տարբերակել գլխավորը երկրորդականից, ազգայինը՝ համամարդկայինից, հայրենասի-րությունը ազգայնամոլությունից։
- Գրողների, հայ մեծերի, արվեստագետների ստեղծած բարձրարժեք գործերի միջոցով ամրապնդել, ընկալել տալ մարդկային (ընտանեկան, հայրենասիրական) հարաբերություններում բարձր արժեքները։
- Գեղարվեստական գրականությունից դուրս գրել տալ հերոսին բնութագրող տողերը և համեմատական կերպարների բնութագիր ստեղծել։

- Հասնել նրան, որ աշակերտները կարողանան հասկանալ թեմայի գաղափարը, արտահայտեն սեփական կարծիքը:

Հայրենասիրական դաստիարակությունը բազմաշերտ գործընթաց է, համալիր միջոցառումների համակարգ, որը ներառում է պայմանների ամբողջությունը, համակարգը, բովանդակությունը, իրականացման մեթոդներն ու միջոցները, դրանց կատարելագործման հնարավորությունները, ինչ սխալներ, ինչ բացթողումներ կան այդ համակարգում, ինչպես կարելի է դրանք հաղթահարել:

«Հայրենասիրությունը կարելի է ձևակերպել որպես հասարակական կյանքի և պետության բոլոր ոլորտներին բնորոշ առավել նշանակալի, անգերազանցելի արժեքների համակարգ, ինչը հանդիսանում է անձի կարևորագույն հոգևոր սեփականությունն ու բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը և դրսևորվում ինքնիրացման ակտիվ գործընթացում՝ ի շահ հայրենիքի բարօրության» :

Հայաստանում սովորողների հայրենասիրական դաստիարակության համար հիմք են ծառայում հասարակագիտական առարկաների հայեցակարգերն ու առարկայական չափորոշիչները:

«Ավագ դպրոցի ուսումնական ծրագրում կերպար ձևավորող կրթությամբ և արժեքային կրթությամբ զբաղվում է հիմնականում հասարակագիտությունը. կրթության այդ երկու ուղղությունները ժողովրդավարական հասարակության անդամներ դաստիարակելու երկու հիմնական նախապայմաններն են: Գրական ստեղծագործությունների վերլուծության ժամանակ կարևոր է ուշադրություն դարձնել հայրենասիրական գաղափարներին, քանի որ գեղարվեստական տեքստի վերլուծությունը նպաստում է ոչ միայն ստեղծագործության բովանդակությունը ճիշտ հասկանալուն, այլև զարգացնում սովորողների գեղարվեստական ճաշակը, օգնում նրանց լավ հասկանալու գեղարվեստական խոսքի նրբությունները, նրանց համակում է հայրենասիրական գաղափարներով:

Հայրենասիրության ժամանակակից ընկալումը բնութագրվում է ոչ միօրինակությամբ: Շատ բանում այն բացատրվում է տվյալ երևույթի բարդ բնույթով, նրա բովանդակության

բազմակողմանիությամբ և արտահայտման ձևերի բազմազանությամբ։Բացի դրանից, հայրենասիրության խնդիրը դիտարկվում է տարբեր հետազոտողների կողմից տարբեր պատմական, սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմաններում, ինչպես նաև կախված անհատական քաղաքացիական դիրքորոշումից, սեփական հայրենիքի նկատմամբ վերաբերմունքից: Ժամանակակից հասարակության մեջ նկատվում է ազգային արժեքների, մշակույթի, հայրենասիրական գաղափարների նկատմամբ անտարբերություն, դրանց անտեսում, քաղաքացիական դիրքորոշման պակաս: Ուստի կարևոր է, թե ինչպիսի սոցիալ-մշակութային քաղաքականություն է վարում պետությունը, ինչպիսին է կրթական համակարգի բովանդակությունը, քանի որ դրանով է պայմանավորված ժամանակակից աշխարհի մարտահրավերներին դիմակայելու հաջողությունը, ազգային վերածնունդը:

Աշխարհաքաղաքական ժամանակակից զարգացումների ֆոնին, էթնիկական ու կրոնական, միջազգային ահաբեկչության սպառնալիքների պայմաններում առաջնային դերակատարում է ստանձնում հայրենասիրությունը: Որպես արժեք այն բազմաբովանդակ է:

Բարոյական գիտակցության դրսևորման զգայական աստիճանի արտացոլման ձևերից մեկն է հասարակական ապրումների զգացմունքների խումբը: Վերջինիս էությունն արտացոլող արժեքներից է նաև հայրենասիրությունը: Այն՝ որպես կատեգորիա, արտացոլում է հասարակությունում տիրող, ինչպես նաև ազգային էթնիկական հոգևոր բարոյական մթնոլորտը:

Անժխտելի է, որ հայրենասիրությունը հանդիսանում է ազգի, ժողովրդի, հասարակության, պետության, սոցիալական հանրույթի, անհատի գոյատևման անբաժանելի բաղադրիչը, իսկ հասարակության և պետության դիալեկտիկական գոյատևումն անհնար է պատկերացնել առանց այդ իսկ կառույցների միասնության, ամբողջականության, դինամիկ ու բարեհաջող զարգացման կարևորագույն պայման հայրենասիրության:

Վերջինս բնութագրվում է որպես բարդ, բովանդակային առումով բազմաբաղադրիչ երևույթ, որն ունի զարգացման տարբեր փուլեր և մակարդակներ: Դրսևորումներ, որոնք

ակնառու են դառնում հասարակական կյանքի բոլոր կարևորագույն ոլորտներում ու ամենատարբեր ձևերով:

Հայրենասիրությունը հայ ժողովրդի համար ունի իր ինքնատիպ առանձնահատկությունները՝ պայմանավորված ազգային էթնիկական անկրկնելի պատմական զարգացմամբ, հոգևոր ու նյութական մշակույթով, աշխարհաքաղաքական ու բնապատմական զարգացումներով պայմանավորված կյանքի ընթացքով, հայ էթնոսի արիական, աշխարհաստեղծ մենթալիտետով, ազգային ինքնագիտակցությամբ, ի վերուստ տրված հարատևման անհրաժեշտությամբ:

Հայրենասիրության դրսևորման բարձր մակարդակի հասնելն ու դրա պահպանելը բավականին բարդ ու շատ աշխատատար գործընթացներով խնդիր է:

Ելնելով շարադրվածից՝ փորձենք հասկանալ հայրենասիրության տեղն ու դերը, դրա էությունը անհատի, հասարակության ու պետության կյանքում:

Հայրենասիրությունը կարելի է ձևակերպել որպես հասարակական կյանքի և պետության բոլոր ոլորտներին բնորոշ առավել նշանակալի, անգերազանցելի արժեքների համակարգ, ինչը հանդիսանում է անձի կարևորագույն հոգևոր սեփականություն ու բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը և դրսևորվում է ինքնառեալիզացման ակտիվ գործընթացում ի շահ Հայրենիքի բարօրության:

Անտարակույս, հայրենասիրությունը որոշակի առումով հանդես է գալիս որպես հասարակական ու պետական վերնաշենքի ինքնատիպ հիմք, գաղափարական հենարան: Այստեղից էլ այն համոզմունքը, որ հայրենասիրությունը չի կարող վերացական կերպով հանդես գալ, այսինքն լինել օբյեկտից ու սուբյեկտից դուրս:

Հայրենասիրության օբյեկտը միանշանակ թանձրացված Հայրենիքն է իր ամբողջ էությամբ ու բովանդակությամբ:

Հայրենասիրության սուբյեկտի դերում հանդես են գալիս սոցիալական կառույցները՝ անձը, սոցիալական հանրույթը, դասակարգը, ազգը և այլն:

Այստեղ երևան է գալիս հայրենասիրությունն ու սուբյեկտը մեկ հարթության բերող և իրար շաղկապող գործառույթի անհրաժեշտությունը հայրենասիրական դաստիարակություն անվամբ:

Հայրենասիրական դաստիարակությունը դպրոցում

Մարդու կյանքում դպրոցական տարիքն այն շրջանն է, երբ դրվում են բարոյական զգացմունքների, որակների, ազգային պատկանելության գիտակցության ձևավորման և գնահատման նախնական հիմքերը: Երեխան սկսում է գնահատել ինչպես ուրիշի, այնպես էլ իր վատ ու լավ արարքները : Այդ գնահատումների հիմքի վրա երեխայի մոտ ծագում են ապրումներ, որոնք հետագայում վերածվում են դրական կամ բացասական սովորությունների: Հոգեբանների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դպրոցական տարիքի երեխաների մեջ դաստիարակված հատկություններն ու բնավորության գծերը հե տագայում վճռական ազդեցություն են ունենում նրա անձնավորության ձևավորման գործում: Դրա համար անհրաժեշտ է դեռ վաղ տարիքից մեծ ուշադրություն դարձնել նրա հայրենասիրական դաստիարակության վրա: Հայրենասիրական դաստիարակությունը նպատակ ունի երեխաների մեջ զարգացնել հայրենասիրական զգացմունքներ, սովորություններ և ազգային մշակույթ: Դպրոցական տարիքում երեխայի վարքը զգալի չափով որոշվում է զգացմունքներով: Այդ իսկ պատճառով արդեն այդ տարիքից երեխաների մեջ դաստիարակում են տարբեր զգացմունքներ՝ սեր ծնողների նկատմամբ, սեր մեծերի, հայրենիքի նկատմամբ, սեր և հարգանք հարևան ժողովուրդների նկատմամբ, նաև դրվում են բարեկամության և ընկերության նախնական զգացմունքի հիմքերը: Այդ առիթով Բելինսկին ասել է. «Ինչքանով երեխան փոքր է, այնքանով անմիջական պետք է լինի նրա հայրենասիրական դաստիարակությունը, այսինքն՝ նրան պետք է ոչ թե սովորեցնել, այլ ընտելացնել լավ զգացմունքների, հակումների, սովորությունների»:

«Հայրենասիրությունը», որը զուգորդված է այլ ժողովուրդների նկատմամբ հետաքրքրությամբ և սիրով, անփոխարինելի է մտքի և սրտի նորմալ զարգացման համար: Մարդկանց համար բնական է սիրել իրենց հողը, իրենց գյուղը, քաղաքը, իրենց երկիրը և ժողովրդին, ինչպես նաև իրենց հարևաններին և այլ ազգերին, ողջ աշխարհը : Մարդու համար բնական է սիրելը. այս գաղափարը պետք է տարածվի դաստիարակության բոլոր

ոլորտների վրա: Մենք ձևավորում ենք մեր սեփական «ես»-ը միայն այլ մարդկանց հետ շփման գործընթացում:

Մինչև վերջերս, թվում էր, որ հայրենասիրության հարցը մեր երկրում վաղուց արդեն լուծված է: Սակայն հաճախ հանդիպում ենք երևույթների, որոնք կարող են ազդել յուրաքանչյուր ազնիվ մարդու ներաշխարհի վրա: Դպրոցականի մեջ հայրենասիրական զգացմունքների դաստիարակումը երկար և բարդ գործընթաց է: Հարազատ մարդկանց, դպրոցի, հարազատ քաղաքի և հայրենիքի հանդեպ սերը կարևոր նշանակություն ունի երեխայի անձնավորության զարգացման վրա: «Յուրաքանչյուր երեխա ծնվում է բարի և բարի կյանքի համար»,- ասել է հրաշալի դերասան Ե. Լեոնովը: Եվ բարոյական ինչպիսի որակներ կզարգանան երեխայի մոտ, հիմնականում կախված է ծնողներից և երեխային շրջապատող մեծահասակներից: Արդի ժամանակաշրջանում երիտասարդ սերնդի հայրենասիրա կան դաստիարակության հարցը առավել հրատապ է: Հայրենասիրական դաստիարակության ծրագիրն անհրաժեշտ է իրականացնել երեխաների ուսուցման և

դաստիարակության նոր մոտեցումների կիրառման միջոցով: Առաջին հերթին, դա նշանակում է հրաժարվել դաստիարակության ավտորիտար միջոցներից: Ուսուցումը պետք է լինի ուղղակի, զարգացնող, հարստացնի երեխայի գիտելիքները, ձևավորի ճանաչողական հետաքրքրություններն ու կարողությունները: Անհրաժեշտ է հստակ պատկերացում, թե ինչպես ենք մենք ցանկանում դպրոցականի մեջ դաստիարակել հայրենասիրություն, սեր երկրի, քաղաքի, հարազատների, հարգանք մեծահասակների հանդեպ: Այդ աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ է կատարելագործել բարոյական դաստիարակությունը, զարգացնել երեխայի անձնական մշակույթը, որպես հայրենիքի հանդեպ սիրո հիմք: Այս նպատակի իրականացման համար անհրաժեշտ է առանձնացնել հե տևյալ 3 խնդիրները՝

- յուրաքանչյուր դպրոցականի մեջ առաջացնել հետաքրքրություն իր քաղաքի, մարզի, երկրի պատմության վերաբերյալ, ձևավորել մարդասիրական վերաբերմունք շրջակա միջավայրի, բոլոր կենդանի էակների նկատմամբ,

- յուրաքանչյուր երեխայի մեջ արթնացնել հետաքրքրասիրություն, գեղեցիկը զգալու ունակություն, իր ընտանիքի, իր տան, իր սեփական ժողովրդի, նրա պատմության, սովորույթների և ավանդույթների հանդեպ ձևավորել սիրո, ջերմության և պատասխանատվության զգացում,
- օգնել ծնողներին պահպանել և զարգացնել երեխաների հետաքրքրասիրությունը ծնող-երեխա-դպրոց համատեղ գործունեության ընթացքում: Նշված խնդիրների լուծման համար իրականացվել են մի շարք ճանաչողական պարապմունքներ և զրույցներ, մշակվել է հարցաթերթ ծնողների համար:

Սուխոմլինսկի Վ.Ա., Ինչպես դաստիարակել իսկական մարդ, Երևան, 1980, էջ 105

Ամիրջանյան Յու.Ա., Սահակյան Ա.Ս., Մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2005, էջ 52 3 Գևորգյան Է., Խաչատրյան Կ., Վիրաբյան Ա., Հայոց պատմություն, դասագիրք հանր.դպրոցի 9-րդ դասարանի, Երևան, 2014, էջ 63

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՏԵՔՍՏԻ ՇՈՒՐՋ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ

Դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացը ուսումնական գործընթացի սուբյեկտների փոխգործակցության արդյունք է, որի արդյունավետությունը պայմանավորված է և՛ արժեքների յուրացման նկատմամբ սովորողների գործունեությամբ, և՛ այդ գործընթացը կազմակերպող ուսուցչի փորձառությամբ: Արժեքային կողմնորոշումները կարևորվում են առաջին հերթին անձի զարգացման տեսանկյունից: Դպրոցականների զարգացման գործընթացում հոգեբանական խորքային փոփոխությունները վկայում են նշված տարիքային փուլում երեխայի զարգացման լայն հնարավորությունների մասին: Այս ժամանակահատվածում երեխայի զարգացման ներուժն իրականացվում է՝ ճանաչելով շրջակա աշխարհը, ձեռք բերելով հասարակական գործունեության իր սեփական փորձը: Ուսումնական գործընթացը ձևավորում է ոչ միայն արժեքային կողմնորոշումներ, այլև արժեքային գնահատողական վերաբերմունք բոլորի, այդ թվում՝ ընտանիքի անդամների նկատմամբ:Բոլոր ժամանակների և մանավանդ այսօրվա դպրոցի առջև դրված է կյանքի կողմից պարտադրված կարևորագույն խնդիր. այն է՝ դաստիարակել հայրենասեր սերունդ: Վաղվա օրվա հայրենյաց սահմանի պաշտպանն այսօրվա դպրոցականն է ու նրա մեջ հայրենասիրություն սերմանող ուսուցիչը, ով իր անխոնջ աշխատանքով մատաղ սերնդի հոգում դնում է հայրենասիրության ծլարձակող սերմեր: «Հայրենասիրություն» բառից, նշանակում է հայրենիքը սիրող: Հայրենասիրությունը բարոյական բարձր որակ է: Այն սոցիալական դիրքորոշում է, որի հիմնական բաղադրիչը սերն է: Մարդու հայրենասիրությունը հանդես է գալիս և մարմնավորվում տվյալ մարդու (դպրոցականի)՝ դեպի իր հայրենիքը ունեցած սիրո մեջ: Սերը ոչ միայն հայրենիքի նկատմամբ է, այլ նաև հայրենիքում ապրող ժողովրդի նկատմամբ: Երբ ասում ենք հայրենիք, ապա առաջին հերթին հասկանում ենք հայրենիքում ապրող ժողովուրդը»: Գիտամանկավարժական գրականության մեջ

ընդունված է այն տեսակետը, որ աշակերտի հայրենասիրական դաստիարակությունը իրականացվում է երեք փուլով՝

• կրտսեր դպրոցում (I-IV դասարաններ) հայրենասիրական պատկերացման հիմքեր են ձևավորվում,

• հիմնական դպրոցում (V-IX դասարաններ) ձևավորվում է աշակերտի հայրենասիրական մտածողությունը,

• ավագ դպրոցում (X-XII դասարաններ) աշխատանքներ են տարվում սովորողի հայրենասիրական գիտակցության ձևավորման ուղղությամբ: Սույն հետազոտության նպատակը հանրակրթության մեջ աշակերտի բարոյական դաստիարակության, մասնավորապես հայրենիքի նվիրյալի և պաշտպանի ձևավորման գործընթացում վերը նշված երեք փուլերով իրականացվող ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետությունը ապահովող մեթոդների և հնարների մշակումն ու համակարգումն է: Առաջադիր նպատակին հասնելու համար մեր կողմից առաջ են քաշվել մի շարք խնդիրներ, ինչպիսիք են՝

• մատնանշել կրտսեր և միջին դասարաններում հայրենասիրական դաստիարակությանն ուղղված աշխատանքները՝ պայմանավորված աշակերտների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններով,

• ներկայացնել սովորողի հայրենասիրությանը միտված աշխատանքի գիտականորեն հիմնավորված ուղիները,

• համակարգել և ընդհանրացված նկարագրել կրտսեր և միջին դպրոցում դասարանական և արտադասարանական աշխատանքների համամասնության ճիշտ պահպանմամբ աշակերտի արժեքային համակարգի ձևավորմանը նպաստող և արդեն փորձով արդարացված լուծումները: Ուստի ուսումնադաստիարակչական խնդիրների լուծումը մենք իրականացնում ենք դասարանական աշխատանքի շարունակությունը համարվող արտադասարանական պարապմունքներով, որոնք անմիջականորեն կապված են դասարանում կատարվող աշխատանքների հետ: Դասագրքերում զետեղված

գեղարվեստական տեքստերը առանցքային նշանակություն ունեն երեխաների հայրենասիրական դաստիարակության ձևավորման և զարգացման գործում: Գեղարվեստական տեքստերի միջոցով աշակերտները ոչ միայն սովորում են կարդալ, հասկանալ կարդացածը և վերարտադրել, այլև տեղեկություններ են ձեռք բերում Հայաստանի, նրա քաղաքների, բնության, հայ ժողովրդի պատմության, սովորույթների, ինչպես նաև բազմաթիվ աշխարհաճանաչողական գիտելիքներ («Աշուն», «Տերևաթափ», ,«Ամիսներ և չորս եղանակ», «Երևան», «Սուրբ Էջմիածին», «Լավաշ»,«Հայաստան»,«Ա՛խր, ես ինչպես վեր կենամ գնամ»,«Ես իմ անուշ Հայաստանի», «Երկիր Նաիրի» շարքը, «Նավը լեռան վրա» և այլն , որոնք զարգացնում են նրանց գեղագիտական ճաշակը, մտածողությունը, մասնավորապես խոսքը:Կարելի է ասել՝ չկա մի հայ գրող, որի գործերը հայրենասիրություն չդաստիարակեն,ինչպես «Վարդանանքը», «Գրորգ Մարզպետունին» և այլն:Մեջբերենք Ուշինսկու խոսքերը. «Լեզուն, լինելով ժողովրդի բազմադարյան հոգևոր կյանքի ամենալիակատար և ստույգ տարեգրությունը, միաժամանակ ժողովրդի մեծագույն դաստիարակիչն է» :

Աշակերտների հայրենասիրական դաստիարակության ձևավորման գործում կարևոր դեր ունեն մայրենիի դասագրքերում զետեղված հայենասիրական թեմաներով ստեղծագործությունները:

---

1 Ананьев Б.Г., Психологическая структура личности и ее становление в процессе индивидуального развития человека / О проблемах современного человекознания. М.: Наука, 1976, с. 189.

2 Воспитание у младших школьников ценностного отношения к семье в условиях общеобразовательной школы, https://mir-nauki.com/PDF/67PDMN418.pdf.

3Ценность младшего школьного возраста, https://studfile.net/preview/6014827/page:69/, https://moluch.ru/archive/164/45271/.

4ՍարգսյանՎ. նուրիշներ, Մայրենի 2, Երևան, 2010, էջ 24-27, 126-130:

5ՈՒշինսկիԿ. Դ., Մանկավարժականընտիրերկեր, հ. 2, 1959, էջ 605-606

Հայրենասիրական թեմաներով ստեղծագործությունների գաղափարի բացահայտումը նպատակային է և գիտակցական, եթե ընթերցանության ժամանակ աշակերտների մեջ ծագում են տարաբնույթ վարկածներ այն մասին, թե ինչ էինք կարդալու, ձգտումեն հասկանալ, թե ինչի մասին է խոսքը գնալու, և որն է նշված ստեղծագործության հիմնական գաղափարը: Նշված գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է ինչպես աշակերտի ունեցած գիտելիքների պաշարով, այնպես էլ ուսուցչի գործոնով, նրա օգնությամբ:

Հատուկ դեր երիտասարդների հայրենասիրական դաստիարակության մեջ ՝ նվիրված թանգարաններին եւ մշակութային հուշարձաններին: Նրանք օգնում են երեխաներին

միանալ իրենց ժողովրդի պատմական եւ մշակութային արժեքներին, ծանոթանալ իրենց հայրենի պատմության եւ ամբողջ պետության պատմության մեջ տեղի ունեցող տարբեր

իրադարձությունների մասին: Այսպիսով, հայրենասիրական դաստիարակության գործում այսօր ավելի մեծ ուշադրություն պետք է դարձնել: Այսինքն ՝տարբեր մշակութային եւ կրթական միջոցառումներ, որոնք նախատեսված են դպրոցական ծրագրով:

ՈՒսումնադաստիարակչական խնդիրների լուծումը մենք իրականացնում ենք դասարանական աշխատանքի շարունակությունը համարվող արտադասարանական պարապմունքներով, որոնք անմիջականորեն կապված են դասարանում կատարվող աշխատանքների հետ:

Մեծ մանկավարժ Վ. Սուխոմլինսկին մանկավարժական երկարատև տարիների իր գործունեության մասին խոսելիս նշել է. «Ճնապարհորդություններ կատարել դեպի մեր հայրենիքի վեհության, պատվի, փառքի, անկախության համար կատարված սխրանքների աշխարհը»: Հետևելով մեծ մանկավարժի պատգամներին՝ դպրոցում աշակերտի հայրենասիրական դաստիարակությունը իրականացնում ենք դաստիարակության կենսագործման դասարանական և արտադասարանական աշխատանքների զանազան ուղիներով՝ դրական օրինակով, հայրենիքի մասին զրույցներով, գրական ստեղծագործությունների վերլուծություններով, միջառարկայական և ներառարկայական կապեր ստեղծելով և այլն: Կիրառում ենք նաև արտադասարանական տարբեր

միջոցառումներ. արցախյան պատերազմի հերոսների, ռազմական մարտերի մասին ականատեսների վկայություն հիշողություններ.սովորողները ճանաչում են արցախյան պատերազմի հերոսներին, ծանոթանում են ռազմական մարտերի մասնակիցների վերապրած հիշողություններին,

էքսկուրսիաների, արշավների իրականացում. երեխաները ճանաչում են հայրենի բնաշխարհը, սիրում հայրենի հողը, մասնակցություն ազգային տոներին. սովորողները ճանաչում են ազգային տոները, անձամբ մասնակցում տոնակատարություններին,պատրաստում դրանց վերաբերյալ սահիկներ,զրույց, դասախոսություն, բանավեճ. աշակերտները փոխանակում են հայրենասիրական գաղափարներ, հարստացնում են հայրենիքի մասին ունեցած գիտելիքները, բանավեճի արդյունքում կատարում եզրահանգումներ, արցախյան թեմաներով կինոդիտում. փաստավավերագրական ֆիլմերի օգնությամբ աշակերտները ծանոթանում են պատմական փաստերին, հայրենասիրական թեմաներով ցերեկույթներ, վիկտորինաներ. սովորողներն անձամբ մասնակցում են միջոցառումների կազմակերպմանն ու ներկայացմանը. ապահովվում է առողջ մրցակցություն: Սովորողի հայրենասիրական դաստիարակության առաջին փուլում կարևորվում է աշակերտների՝ հայրենիքի մասին ունեցած պատկերացումների ձևավորումն ու ամբողջացումը: Փոքրածավալ նյութերի ընթերցման ճանապարհով խնդիր է դրվում սովորողների մեջ ձևավորել հայեցի դաստիարակություն, ազգային հոգեկերտվածք՝ նպաստելով երեխայի ինքնաճանաչմանն ու ինքնադրսևորմանը, և ամենևին էլ պատահական չէ, որ դպրոցում աշակերտի հայրենասիրական պատկերացումների ստեղծումը խարսխվում է հայրենիքի նվաճումների հանդեպ աշակերտի հպարտության գիտակցման վրա, որը դառնում է հայրենասիրության հիմքը: Գրականությունը և պատմությունը կյանքի դասեր են ուսուցանում սովորողներին, զարգացնում նրանց ստեղծագործական, վերլուծական ակտիվությունը և դաստիարակում ինքնատիպ անհատականություններ:

Հայրենասիրություն դաստիարակելը պահանջում է հետևողական, համբերատար աշխատանք. այն չի ձևավորվում միանգամից. դրա ակունքները շատ խորն են, գալիս են նախնիներից, սկիզբ են առնում ընտանիքում, բակում, ընկերական և հասարակական

հարաբերություններում, դառնում կայուն որակ և անձի անբաժանելի մաս ու բնավորության գիծ: Պետք է հստակ գիտակցել, որ հայրենիքը սոսկ աշխարհագրական միջավայր չէ, այլ հոգևոր արժեքներով հարուստ ու սրբազան անկյուն, տարածք, որը քոնն է և յուրա քանչյուր հայինը: Հայրենասիրությունն ամենաուղղակի առնչությունն ունի ծնողասիրության ու որդեսիրության հետ, և որ պատմությունն այդ իմաստով լավագույն ուսուցիչը կարող է լինել աշակերտների համար: Սովորողների բարոյական նորմերի, հայրենասիրության ձևավորման արդյունավետությունը երևում է այն ժամանակ, երբ դաստիարակության խոսքային մեթոդները զուգակցվում են գործունեության տարբեր ձևերի հետ, և աշակերտը այդ գիտելիքները դրսևորում է իր առօրյա վարքում՝ տանը, դպրոցում, ընկերների շրջանում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից հասարակության մեջ երիտասարդության հայրենասիրական դաստիարակությունն առանձնակի կարևորություն է ձեռք բերում մի քանի պատճառներով. բարձրանում է նոր սերնդի տեղեկացվածության մակարդակը, ժողովրդավարացման գործընթացները և քաղաքական կյանքում բազմակուսակցական համակարգի գոյությունը որոշակի դժվարություններ են ստեղծում՝ ըմբռնելու հայրենասիրության էությունը: Անհրաժեշտություն է առաջանում երիտասարդության հայրենասիրական դաստիարակությունն իրականացնել որակապես նոր մակարդակով: Ակնհայտ է, որ այսօր կրթական հաստատություններում սովորող ների հայրենասի րական դաստիարակությանը բավարար ուշադրություն չի դարձվում: Ակնհայտ է նաև, որ խորհրդային ժամանակաշրջանում կուտակված հարուստ փորձը չի կարող իր ամբողջ ծավալով կիրառվել նոր պայմաններում, ինչով էլ պայմանավորվում է հայրենասիրական դաստիարակության հարցերով զբաղվող փիլիսոփայականմանկավարժական ժառանգության վերաիմաստավորման անհրաժեշտությունը, դրա ժամանակակից տեսական հիմքերի մշակումը: Հիմնահարցի փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական վերլուծությունը թույլ է տալիս որոշարկել հայրենասիրության՝ որպես սոցիալական երևույթի և անձի բարոյական հատկանիշի էական առանձնահատկությունները: Բազմակուսակցական համակարգի, ժո ղովրդավարական հասարակության պայմաններում «հայրենասիրություն» հասկացություն օգտագործվում է որպես կարգախոս տարբեր հասարակականքաղաքական կառույցների կողմից, հետևաբար մեկնաբանվում է տարբեր կերպ, այդ պատճառով էլ կարևոր է դառնում նրա բովանդակության ճշգրտումը և առանձնահատկությունների սահմանումը նոր սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմաններում, ինչը թույլ կտա երիտասարդության հայրենասիրական դաստիարակությունն իրականացնել գիտական հենքի վրա:

Այսպիսով՝ սովորողների արժեհամակարգի ձևավորման, հայրենասիրական դաստիարակությանն առնչվող խնդիրների լուծման գլխավոր պայմանը սովորողների՝

գեղարվեստական տեքստը խորությամբ հասկանալու, վերլուծելու կարողությունն է: Ստեղծագործական գեղագիտական և բարոյական արժեքներն ընկալելու համար անհրաժեշտ է, որ.

- ✓ խորհեն ընթերցածի շուրջ,
- ✓ ապրումակցեն հերոսներին,
- ✓ գնահատեն նրանց արարքները,
- ✓ իմաստավորեն նրանց խնդիրները,
- ✓ համեմատեն իրենց կյանքը գրական կերպարների կյանքի հետ,
- ✓ ձգտեն կատարել իրենց ընկալած բարոյական նորմերին համապատասխան արարքներ:

Մեր իրականացրած հետազոտությունը ցույց տվեց, որ աշակերտներին պետք է հատվածաբար պատմել տալ գեղարվեստական տեքստը, առավել ևս նրանց հարցեր տալ, ինչպես նաև օգնող բացատրություններ: Որքան էլ որ տեքստերը պատմելիս տեղ տրվի երեխաների ստեղծագործական մտքին և վերլուծական մտածողությանը, այնուամենայնիվ, աշակերտները պետք է տրված խոսքի նմուշից օգտագործեն այն բառերը, արտահայտությունները, որոնք իրենց հանդիպում են առաջին անգամ, որպեսզի պահպանվեն ստեղծագործության իմաստային առանձնահատկությունները, և աշակերտների խոսքը հարստանա դրանցով: Ընթերցած նյութի պատմելը կամ վերարտադրելը առարկաների կատարած գործողությունների, ընթերցած ստեղծագործության գործող անձանց արարքների, նրանց գործունեության մասին որոշակի հաջորդականությամբ հաղորդումն է: Ստեղծագործությունների ընթերցումը, վերարտադրումը, վերլուծումը հանդես են գալիս որպես խոսքի զարգացման կարևոր բաղադրիչ.

- ✓ Ստեղծագործությունը պատմողին պիտի հուշի՝ ո՞ւմ կամ ինչի՞մասին պիտի պատմի և ներկայացնի, թե ի՞նչ է տեղի ունենում (ունեցել):

- ✓ Նկարի վերարտադրության ժամանակ հենակետային բառերն ընտրելու կարողության ձևավորման ժամանակ ուսուցիչը պիտի նկատի ունենա, որ պատմումը պահանջում է սահմանական եղանակի շարժման բայեր, որոնք ցույց են տալիս գործողության արդյունք:
- ✓ Պատմելու ժամանակ կիրառվում են մի անգամ, օրերից մի օր, այդ ժամանակ, հանկարծ, անսպասելի, այդ օրերին, դրա հետևից, հենց որ և նման այլ բառեր և արտահայտություններ:

Դպրոցական մթնոլորտում յուրաքանչյուր աշակերտ, անկախ իր ստացած դաստիարակությունից, անշուշտ, տոգորվում է գիտակցված հայրենասիրությամբ, ճանաչում մեր պատմության դրվագները, մշակույթի գանձերը և գիտակցում, որ ինքն արժանի ժառանգորդը, պահապանն ու փոխանցողը պիտի դառնա այս ամենի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու.Ա., Սահակյան Ա.Ս., Մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2005:

2. Գևորգյան Է., Խաչատրյան Կ., Վիրաբյան Ա., Հայոց պատմություն, դասագիրք հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի, Երևան, 2014:

3. Հայոց լեզու և գրականություն, Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2006:

4. Սուխոմլինսկի Վ.Ա., Ինչպես դաստիարակել իսկական մարդ, Երևան, 1980

5. Նալչաջյան Ա., Հոգեբանական բառարան, Երևան, 1984:

6. Ուշինսկի Կ. Դ., Մանկավարժական ընտիր երկեր, հ. 2, 1959

7. Воспитание у младших школьников ценностного отношения к семье в условиях общеобразовательной школы, https://mir-nauki.com/PDF/67PDMN418.pdf.